ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Հերմինե Նաղդալյանի, Կարեն Ավագյանի, Կարինե Աճեմյանի, Մկրտիչ Մինասյանի և Գրիգոր Մարգարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 2-րդ հոդվածով նախատեսված փոփոխության կապակցությամբ հայտնում ենք, որ տվյալ դեպքում իրականացվող գործողությունը, որպես հասկացություն, ճշգրիտ արտահայտվում է «հրապարակել» բառով:

2. 3-րդ հոդվածով և նախագծով կատարվող փոփոխություններն ու լրացումները որոշակիորեն առնչվում են Տեսչական բարեփոխումների հայեցակարգի հիման

վրա մշակված և 2011 թվականի մայիսի 25-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթով կարգավորվող հարցերին: Այդ առումով առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի՝

1) 2-րդ և 4-րդ մասերում «իսկ հաշվետու տարվա արդյունքներով» բառերը փոխարինել «իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով» բառերով (Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ ներկայացված նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասով արդեն իսկ նախատեսված է նշված փոփոխությունը).

2) 3-րդ մասում «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք պատասխանատվության են ենթարկվում բացառապես օրենքով սահմանված կարգով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջի.

3) 4-րդ մասում՝

ա. «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջի,

բ. լրացվող նոր՝ 5-րդ մասի երկրորդ պարբերությունում առաջարկում ենք հստակեցնել, որ երկու աշխատանքային օրվա ժամկետի սկիզբը համարվում է տնտեսավարող սուբյեկտի ստուգման մատյանում նշված՝ ստուգումն սկսելու օրը:

3. Նախագծի 4-րդ հոդվածն առաջարկում ենք հանել, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ ներկայացված նախագծում խմբագրվում է օրենքի 6-րդ հոդվածն ամբողջությամբ, որում արդեն իսկ լուծվել է 4-րդ հոդվածով կարգավորվող խնդիրը:

4. Նախագծի հոդվածների դրույթների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին:

Հարկ ենք համարում նշել, որ նշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության Տեսչական բարեփոխումների հայեցակարգի հիման վրա մշակված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով արդեն իսկ նախատեսվել են դրույթներ՝ տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգումների համակարգը բարելավելու համար: Օրենքի նախագիծը նպատակ ունի պլանավորելու ստուգումների կազմակերպման և իրականացման ընթացակարգերը՝ ներդնելով ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ՝ այլ կարգավորում տալով ստուգումների անցկացման հաճախականությանը և դրանց կազմակերպմանը, ստուգումների արդյունքների ամփոփմանը և դրանց հետևանքներին՝ կապված տնտեսավարող սուբյեկտին այս կամ այն ռիսկային խմբում ընդգրկելու և դրա հիման վրա հետագայում սուբյեկտի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ:

Ելնելով շարադրվածից՝ առաջարկում ենք ներկայացվող նախագծի դրույթները քննարկել Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված և

առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի հայեցակարգային մոտեցումների շրջանակներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կարինե Մինասյանը:

Ներկայացնում ենք օրենքի նախագծի ընդունման դեպքում ընդունումից հետո դրանց կատարումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի ցանկը և ժամանակացույցը՝

6-րդ հոդվածով նախատեսված հարկային մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների մոտ ուսումնասիրությունների արդյունքում կազմված արձանագրության ձևը հարկային մարմնի ղեկավարի հրամանով կսահմանվի օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության օրենքի /որոշում/ նախագծի ընդունման դեպքում

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>

ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին>> N 18-Ն որոշման համաձայն:

Գնահատման արդյունքում՝

1. Սոցիալական պաշտպանության բնագավառի ռազմավարական տեսանկյունից նախագիծն ունի բացասական ազդեցություն՝ նկատի ունենալով ստուգում իրականացնող մարմնի /ՀՀ աշխատանքի պետական տեսչություն/ կողմից աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման լիազորությունների սահմանափակումը:

2. Բնագավառի շահառուների վրա ազդեցության տեսանկյունից ունի դրական ազդեցություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար միջավայրի վրա նախատեսվում է **դրական** ազդեցություն: Նախագծի ընդունմամբ ավելի թափանցիկ կդառնա տեսչական գործընթացը, կնվազի ստուգումների իրականացման հետ կապված վարչարարությունը՝ պայմանավորված հետևյալ հանքամանքներով.

- Նախագծով առավել հստակեցվում և ամրագրվում են ստուգումների իրականացման ժամկետները:
- Նախագծով նախատեսվում է տնտեսավարող սուբյեկտների մոտ միաժամանակ կատարվող ստուգումների քանակության սահմանափակում՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու դեպքում:
- Նախագծով կրկնակի ստուգման անցկացման հիմքեր ներկայացրած անձանց համար սահմանվում է կարգապահական պատասխանատվություն՝ կրկնակի ստուգման արդյունքում այդ հիմքերը չհաստատվելու (չհիմնավորվելու) կամ այդ հիմքերով խախտումներ չհայտնաբերվելու դեպքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

Եզրակացություն
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հիմնավորման համաձայն, նախագծի ընդունումը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում տեղ գտած թերությունների շտկման, ներքին հակասությունների վերացման եւ որոշ դրույթների գործնական կիրառելիության ապահովման անհրաժեշտությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների, ծախսերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում վարվող քաղաքականության վրա կլինի չեզոք:

Նախագիծ
Պ-1140-26.04.2011-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասում՝

1) չորրորդ պարբերության «Սույն հոդվածով նախատեսված» բառերը փոխարինել «Կամերալ» բառով:

2) տասնչորսերորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն կետի իններորդ պարբերությամբ սահմանված ուսումնասիրությունների արդյունքում լրացուցիչ հարկային կամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորություններ չեն առաջադրվում, բացառությամբ հաշվանցման եւ (կամ) վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարի մեծության արձանագրման նպատակով իրականացվող ուսումնասիրության դեպքի:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության «հրապարակում է» բառը փոխարինել «ընդունում է» բառով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին պարբերության չորրորդ նախադասությունը «այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ ստուգման փաստացի դադարեցման դեպքում)» բառերը:

2) 2-րդ մասի առաջին պարբերության հինգերորդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տեւողությունը չի կարող գերազանցել 25 անընդմեջ աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը), իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ եւ ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 անընդմեջ աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը):»:

3) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ պարբերության «թ» կետով նախատեսված կրկնակի ստուգման անցկացման հիմքեր ներկայացրած անձինք կրկնակի ստուգման արդյունքում այդ հիմքերը չհաստատվելու (չհիմնավորվելու) դեպքում ենթակա են

պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:».

4) ավելացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ եւ 6-րդ մասեր.

«5. Նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ միաժամանակ ստուգումներ կարող են իրականացնել ստուգումներ իրականացնող մինչեւ երկու, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ եւ ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ մինչեւ վեց պետական մարմիններ՝ եթե ստուգվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը) գրավոր առարկություն է ներկայացրել համապատասխանաբար՝ երրորդ եւ ավելի կամ յոթերորդ եւ ավելի պետական մարմինների կողմից այդ ժամանակահատվածում ստուգումների անցկացման դեմ, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի երրորդ կետով սահմանված, ինչպես նաեւ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային հաշվանցումներ եւ (կամ) վերադարձ ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձ իրականացնելուց առաջ տնտեսավարող սուբյեկտի մոտ կատարվող ստուգման դեպքերի եւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների:

Ստուգվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը համապատասխանաբար՝ երրորդ եւ ավելի կամ յոթերորդ եւ ավելի ստուգումներ իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումների անցկացման դեմ գրավոր առարկությունը, ինչպես նաեւ տվյալ պահին ստուգումներ իրականացնող պետական մարմինների անվանումների եւ ստուգման ժամկետների վերաբերյալ՝ տնտեսավարող սուբյեկտի ստուգման մատյանից քաղվածքը երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համապատասխան պետական մարմիններին, որոնք պարտավոր են հետաձգել իրենց կողմից ստուգումների ացկացման ժամկետները՝ այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացում գրավոր տեղյակ պահելով տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին:

Ստուգվող տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կողմից սույն հոդվածով սահմանված գրավոր առարկությունը չներկայացնելու կամ սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացնելու դեպքում ստուգումներ իրականացնող պետական մարմինները կարող են կազմակերպել եւ անցկացնել ստուգումներ՝ անկախ տվյալ պահին տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգումներ իրականացնող պետական մարմինների թվաքանակից:

6. Սույն հոդվածով նախատեսված՝ ստուգումների անցկացման քանակի, ժամկետների եւ ստուգումներ իրականացնող պետական մարմինների թվաքանակի հետ կապված սահմանափակումները չեն տարածվում համալիր ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների վրա:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «երեք օրվա» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա» բառերով:

Հոդված 5. Օրենքի հավելված 1-ի 1.5-րդ կետի երկրորդ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե տնտեսավարող սուբյեկտը պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություն է, ապա արձանագրության պատճենի մեկ օրինակն ուղարկվում է պետական կառավարման վերադաս մարմնին:»:

Հոդված 6. Օրենքի հավելված 3-ը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 1.4-րդ եւ 1.5-րդ կետերով.

«1.4. Ուսումնասիրության իրականացման հանձնարարագիրը նախքան ուսումնասիրությունն սկսելը ծանոթացման նպատակով ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

1.5. Ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձն ուսումնասիրության արդյունքում կազմում է արձանագրություն՝ 2 օրինակից: Ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրության ձեւը սահմանվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով: Արձանագրության մեջ նշվում են հանձնարարագրի համարը, ուսումնասիրության համար ընդգրկված ժամանակաշրջանը, արձանագրության կազմման վայրը, ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, տնտեսավարող սուբյեկտի տվյալները (հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը), ստացված արդյունքները:

Արձանագրությունն ստորագրում են ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձը (անձինք) եւ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որն առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնում է գրավոր: Եթե տնտեսավարող սուբյեկտը պետական կամ պետական բաժնեմաս ունեցող կազմակերպություն է, ապա արձանագրության պատճենի մեկ օրինակն ուղարկվում է պետական կառավարման վերադաս մարմնին:»:

Հոդված 7. Օրենքի հավելված 4-ի ութերորդ մասի վերջին նախադասության «բողոքարկում են» բառը փոխարինել «կարող են բողոքարկել» բառերով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) ընդունումը պայմանավորված է օրենքում տեղ գտած թերությունների շտկման, ներքին հակասությունների վերացման եւ որոշ դրույթների գործնական կիրառելիության ապահովման անհրաժեշտությամբ: Մասնավորապես,

ա) առաջարկվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կողմից գրավոր առարկություն ներկայացնելու դեպքում սահմանափակել նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ միաժամանակ ստուգում իրականացնող պետական մարմինների թվաքանակը, ելնելով այն հաշվարկից, որ տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը թվով՝ 24 ստուգող պետական մարմինների կողմից կարող է ստուգվել տարեկան մեկ անգամ եւ ստուգման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 25 անընդմեջ աշխատանքային օրը (իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ եւ ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 անընդմեջ աշխատանքային օրը): Այս առումով նախատեսվում է, որ գրավոր առարկություն ներկայացվելու դեպքում նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ միաժամանակ ստուգումներ կարող են իրականացնել ստուգումներ իրականացնող մինչեւ երկու, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ եւ ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ մինչեւ վեց պետական մարմիններ, բացառությամբ համալիր ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների, առանց նախապես ծանուցման իրականացվող ստուգումների, ինչպես նաեւ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային հաշվանցումներ եւ (կամ) վերադարձ ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձ իրականացնելուց առաջ տնտեսավարող սուբյեկտի մոտ կատարվող ստուգման եւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքերի:

Այս լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ տեսականորեն օրենքով սահմանված ստուգող բոլոր (թվով՝ 24) պետական մարմինները կարող են միաժամանակ ստուգումներ կամ ուսումնասիրություններ կատարել ցանկացած տնտեսավարող սուբյեկտի մոտ, ինչը, բնականաբար, կարող է բավականին մեծ խոչնդոտներ հարուցել տվյալ տնտեսավարողի գործունեության համար: Մյուս կողմից, հաշվի է առնվել, որ տնտեսավարող սուբյեկտների համար կարող է նաեւ ձեռնտու լինել միանգամից բոլոր ստուգումներն անցնելու մեխանիզմը, որի պատճառով էլ առաջարկվող սահմանափակման կիրառումը պայմանավորվել է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի ցանկությամբ,

բ) առաջարկվող մյուս փոփոխություններն ու լրացումները պայմանավորված են Օրենքում տեղ գտած բացթողումների լրացման, ներքին հակասությունների վերացման, որոշ դրույթների հստակեցման եւ ստուգման ընդհանուր ժամկետների ճշգրտման անհրաժեշտությամբ:

Նախագիծը քննարկվել է գործադիր մարմնի շահագրգիռ կազմակերպությունների համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ: